# ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

## ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎՈՒՏՈՒՄ

Վ. Մ. ԱՂՈՒԶՈՒՄՅԱՆ

*Ամեն մի նոր հասարակական արտադրանակաղ, նախորդների համեմատությամբ հանդիսանալով արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման ավելի բարձր աստիճան, ստեղծում է այդ զարգացմանը համապատասխան իր նյութատեխնիկական բազան։ Հասարակարգի նյութատեխնիկական բազան արտադրության բոլոր բնագավառներում գործադրվող աշխատանքի միջոցների այն ընդհանրությունն է, որոնցով արտադրում են հասարակության ու նրա անդամների սպառման պահանջմունքները բավարարելու համար անհրաժեշտ նյութական բարիքները։ Տարբեր արտադրական ֆորմացիաներում նյութատեխնիկական բազան հանդես է գալիս տարբեր հասարակական ձևով։ Այսպես, օրինակ, կապիտալիզմի ժամանակ այն հանդես է գալիս հիմնական կապիտալի, իսկ սոցիալիզմի օրոք՝ աշխատանքի հասարակական միջոցների ձևով։ Աշխատանքի միջոցների հասկացությունը իր մեջ ընդգրկում է արտադրության միջոցները, աշխատանքի առարկաների վրա ներգործման իրային պայմանները, արտադրական շենքերը, կառուցվածքները, ջրանցքները, ճանապարհները, աշխատանքի առարկաների պահեստները և այլն։*

*Նոր հաղթանակող հասարակարգը նախորդից ժառանգելով որոշ մակարդակի նյութատեխնիկական բազա, փոխում է նրա հասարակական ձևը և, արտադրական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների համապատասխանության տնտեսական օրենքի պահանջներին համապատասխան, հասցնում է քանակական ու որակական զարգացման մի նոր ավելի բարձր աստիճանի։*

*Նյութատեխնիկական բազայի զարգացման հիմքը հանդիսանում է տեխնիկական պրոգրեսը, որը մինչև սոցիալիստական հասարակարգը տեղի է ունեցել տարերայնորեն, համեմատաբար դանդաղ և ընդհատումներով։ Նախնադարյան համայնական հասարակարգի նյութատեխնիկական բազան հանրային սեփականության ձևով հանդես եկող աշխատանքի միջոցների ընդհանրությունն է, որը բնորոշվում է պալեոլիթին ու նեոլիթին հատուկ քարե ու փայտե գործիքներով։ Ստրկատիրական հասարակարգի նյութատեխնիկական բազան հանդես է գալիս աշխատանքի միջոցների մասնավոր ստրկատիրական սեփականության ձևով, որը բնորոշվում է երկրագործության, անասնապահության, որսորդության և արհեստների բրոնզյա, ապա երկաթյա գործիքներով։ Ֆեոդալիզմի համար բնորոշ են ճորտատիրական սեփականության ձևով հանդես եկող արհեստային տեխնիկան, իլիկը, գործվածքային դազգահը, ինքնաշարժ ճախարակը, դարբնի փուքսը, մուրճը և ունելին, ըստ որում սրանք հանդիսանում են անհատական աշխատանքի գործիքներ։ Մարքսը և Էնգելսը «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը» գրքում տվել են կապիտալիզմի արտադրողական ուժերի, հետևաբար նաև նյութատեխնիկական բազայի հետևյալ կլասիկ բնորոշումը. «Բուրժուազիան իր դասակարգային տիրապետության ավելի պակաս քան 100 տարվա ընթացքում ավելի բազմաթիվ և ավելի վիթխարի արտադրողական ուժեր է ստեղծել, քան նախորդ բոլոր սերունդները միասին վերցրած։ Բնության ուժերի հպատակեցում, մեքենայական արտադրություն, քիմիայի կիրառում արդյունաբերության և հողագործության մեջ, շոգենավագնացություն, երկաթուղիներ, էլեկտրական հեռագիր, ամբողջ աշխարհամասերի յուրացում հողագործության համար, գետերի հարմարեցում նավարկության համար, կարծես գետնի տակից դուրս կոչված բնակչության ամբողջ մասսաներ—նախկին դարերից որը կարող էր կասկածել, թե այդպիսի արտադրողական ուժեր են ներքնում հասարակական աշխատանքի ընդերքում»[1]։*

1 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, Հայպետհրատ, 1960, էջ 39։

Կապիտալիզմի նյութատեխնիկական բազան ստեղծվեց և բուռն զարգացում ապրեց արդյունաբերական հեղաշրջման էպոխայում, որն ընդգրկում է XVIII—XIX դարերը և որի ընթացքում ստեղծվեցին խոշոր մեքենայական արդյունաբերության աշխատանքի միջոցները։ Կապիտալիզմի նյութատեխնիկական բազան բնորոշվում է նրանով, որ արտադրության հիմքում դրվում է մեքենայի աշխատանքը. մեքենան հանդիսանում է կապիտալի կողմից աշխատուժի անսահման շահագործման միջոց։ Մետաղամշակման զարգացումը համապատասխանում է շոգեմեքենաների, մեքենաշինության ու պաղգահաշինության աճող պահանջներին, մեքենաների զարգացումն ու կատարելագործումը տեղի է ունենում էլեկտրաշարժիչների և էլեկտրատեխնիկայի հիման վրա։ Սակայն զարգացման որոշ աստիճանում, հատկապես իմպերիալիզմի էպոխայում, արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր կապիտալիստական եղանակի միջև եղած հակասությունը արտահայտվելով արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև տեղի ունեցող անտագոնիստական հակասության ձևով, արգելակում է կապիտալիզմի նյութատեխնիկական բազայի զարգացումը։ Դրա հետևանքն են պարբերաբար կրկնվող տնտեսական գերարտադրության ճգնաժամերը, օրըստօրե ուժեղացող անարխիան ու կոնկուրենցիան և միլիոնավոր աշխատավորների բացարձակ ու հարաբերական աղքատացումը։ Ինչպես Մարքսն է ընդգծում, խոշոր արդյունաբերության զարգացմամբ բուրժուազիայի ոտքի տակից պոկվում է հենց այն պատվանդանը, որի վրա նա արտադրում ու յուրացնում է արդյունքները։ Վրա է հասնում փլուզվող կապիտալիզմը սոցիալիզմով փոխարինելու դարաշրջանը։

Կոմունիստական հասարակարգի նյութատեխնիկական բազան, որի ստեղծումը սկսվել է ՍՍՌՄ-ում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հետևանքով հաղթանակած պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, ունի իր զարգացման երկու հիմնական էտապները։ Այդ էտապները համապատասխանում են կոմունիստական հասարակարգի զարգացման սոցիալիզմի և կոմունիզմի փուլերին։

Անցած ժամանակաշրջանում ՍՍՌՄ-ում իրականացվեց սոցիալիզմի կառուցման և նրա վերջնական ու լրիվ հաղթանակի լենինյան ծրագիրը։ Ինդուստրացման ու գյուղի սոցիալիստական վերակառուցման հաղթանակի հետևանքով արագորեն զարգացան սոցիալիստական արտադրողական ուժերը, ստեղծվեց սոցիալիզմի նյութատեխնիկական բազա և տիրապետող դարձան սոցիալիստական արտադրական հարաբերությունները։ Հայտնի է, որ ցարական Ռուսաստանը ագրարային-ինդուստրիալ երկիր էր, որը գտնվում էր կապիտալիստական զարգացման միջին մակարդակի վրա։ Բավական է նշել, որ 1913 թ. արդյունաբերական արտադրանքի ծավալով Ռուսաստանը աշխարհում գրավում էր 5-րդ, իսկ Եվրոպայում՝ 4-րդ տեղը։ Այնուհետև առաջին համաշխարհային և քաղաքացիական պատերազմների հետևանքով 1921 թ. Ռուսաստանի արդյունաբերության արտադրանքը կազմում էր 1913 թ. ծավալի 14 տոկոսը, իսկ գյուղատնտեսության արտադրանքը՝ 50 տոկոսը։ Համաշխարհային արտադրանքում 1920 թ. Սովետական երկրի փայբաժինը կազմում էր. չուգունի գծով՝ 0,2 տոկոս, ածխի՝—0,7 տոկոս, պողպատի՝—0,3 տոկոս, նավթի՝—3,8 տոկոս, էլեկտրաէներգիայի՝—0,4 տոկոս։

Չնայած կապիտալիզմից ժառանգություն ստացած թույլ նյութատեխնիկական բազային, Սովետական Միությունը այժմ արդյունաբերության արտադրանքի ծավալով աշխարհում գրավում է երկրորդ, իսկ Եվրոպայում՝ առաջին տեղը։ Սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի զարգացումը 1960 թ., 1913 թ. համեմատությամբ, բնորոշվում է հետևյալ ցուցանիշներով. երկաթահանքի արտադրանքը աճել է ավելի քան 11,5 անգամ, ածուխինը՝ 17,5, նավթինը՝ 17, չուգունինը՝ 11, պողպատինը՝ 15,5, էլեկտրաէներգիայինը՝ 154, ցեմենտինը՝ 30, շաքարինը՝ 9, բրդյա գործվածքներինը՝ 4 և կաշվե կոշիկներինը՝ 7 անգամ։ Չպետք է մոռանալ, որ անցած ժամանակաշրջանի մոտ կեսը ծախսվել է պատերազմների և նրանց ավերիչ հետևանքները վերացնելու վրա։

Սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի մեջ որոշիչը հանդիսանում են հիմնական ֆոնդերը, որոնք 1960 թ., 1913 թ. համեմատությամբ, աճել են 948 տոկոսով։ ՍՍՌՄ-ի բոլոր հիմնական ֆոնդերը 1960 թ., 1928 թ. համեմատությամբ, աճել են ավելի քան 6 անգամ, ըստ որում հիմնական արտադրական ֆոնդերը՝ մոտ 8 անգամ, իսկ հիմնական ոչ-արտադրական ֆոնդերը՝ ավելի քան 4,5 անգամ։ Արդյունաբերության և շինարարության հիմնական արտադրական ֆոնդերը նույն ժամանակամիջոցում աճել են մոտավորապես 37 անգամ, տրանսպորտինն ու կապինը՝ մոտ 9 անգամ, իսկ գյուղատնտեսությանը՝ մոտ 3 անգամ։

Վլադիմիր Իլյիչ Լենինը բազմիցս ընդգծել է, որ սոցիալիստական հասարակարգի միակ նյութական հիմքը կարող է լինել խոշոր մեքենայական արդյունաբերությունը, որն ի վիճակի է

վերակազմավորել նաև գյուղատնտեսությունը։ Սոցիալիզմի նյութատեխնիկական բազան բնորոշվում է խոշոր արդյունաբերության հիման վրա անընդհատ զարգացող տեխնիկայի նոր, ավելի բարձր մակարդակով և ամբողջ երկրի էլեկտրիֆիկացմամբ։ Հասարակական սեփականություն հանդիսացող աշխատանքի միջոցները, որոնց մակարդակն ու արագընթաց զարգացումը պայմանավորված է բարձր զարգացած խոշոր մեքենայական արդյունաբերությամբ, տիրապետող ու որոշիչ են նյութական արտադրության բոլոր բնագավառներում—արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի և կապի միջոցների արտադրության մեջ։

Սոցիալիզմի նյութատեխնիկական բազայում առաջատար դերը պատկանում է մեքենաշինությանն ու էլեկտրաարդյունաբերությանը։ Դրանք զարգանում են համաչափ և պլանաչափորեն, ըստ որում արտադրության մասնագիտացման ու կոոպերացման կատարելագործմանը զուգընթաց տեղի է ունենում կոմպլեքսային մեքենայացման և կոմպլեքսային ավտոմատացման հարաճուն պրոցեսը։ Մեր երկիրը դարձել է ինդուստրիալ-ագրարային հզոր տերություն, որտեղ ժողովրդական տնտեսության մեջ բացարձակ գերազանցություն ունի արդյունաբերությունը, իսկ արդյունաբերության մեջ ծանր արդյունաբերության տեսակարար կշիռը կազմում է ավելի քան 70 տոկոս։ 1960 թ. ՍՍՌՄ արդյունաբերության համախառն արտադրանքը, 1913 թ. համեմատությամբ, աճել է 45 անգամ, ըստ որում արտադրության միջոցների արտադրանքը՝ 103 անգամ, իսկ մեքենաշինությունը՝ 300 անգամ։

Սոցիալիզմի նյութատեխնիկական բազան ՍՍՌՄ-ում ստեղծվեց կապիտալիստական շրջապատման ծանր իրադրության պայմաններում, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ սովետական բազմազգ ժողովուրդների հերոսական ստեղծագործ աշխատանքով։ ՍՄԿՊ XXI համագումարը ամփոփելով II համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում և հատկապես ՍՄԿՊ XX համագումարի պատմական որոշումների իրականացման ուղղությամբ ձեռք բերված նվաճումները նշեց, որ մենք թևակոխել ենք սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու էպոխան և հաստատեց կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում վճռական քայլ հանդիսացող ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման հոյակապ 7-ամյա պլանը։ Հայտնի է, որ յոթնամյակում, որը բուրժուական տնտեսագետների կողմից գնահատվեց որպես մի նոր տիեզերական հրթիռ էկոնոմիկայի բնագավառում, բոլոր կապիտալ ներդրումները կազմելու են 3 տրիլիոն ռուբլի (մինչև 1961 թ. դրամական ռեֆորմը գործող փողի մակարդակով), ըստ որում այդ ներդրումներում վճռական տեղ է տրված արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացմանն ու ավտոմատացմանը։ Ինչպես նշվում է ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրության մեջ², ժողովրդական տնտեսության 1961 թ. պետական պլանը բոլոր ցուցանիշներով հիմնականում գերակատարվել է։ Յոթնամյակի անցած 3 տարիներում (1959—1961) համախառն արտադրանքը, պլանով նախատեսված 27 տոկոսի փոխարեն, ավելացել է 33 տոկոսով և արդյունաբերական արտադրանքը է տրվել պլանից մոտավորապես 19 միլիարդ ռուբլով ավելի։ Յոթնամյակի անցած 3 տարում պլանից ավելի է արտադրվել. չուգուն՝ 1,6 մլն. տոննա, պողպատ՝ 9,2 մլն. տոննա, երկաթահանք՝ 9 մլն. տոննա, նավթ՝ 10,5 մլն. տոննա, գյուղատնտեսական մեքենաներ՝ ավելի քան 350 մլն. ռուբլու, բոլոր տեսակի գործվածքներ՝ 1,2 միլիարդ մետր, կաշվե կոշկեղեն՝ 67 մլն. զույգ և այլն։

ՍՄԿՊ XXII համագումարը, որը պատմության մեջ մտավ որպես կոմունիզմ կառուցողների համագումար, հաստատեց մեր պարտիայի նոր Ծրագիրը։ XX դարը, որում մենք ապրում, ստեղծագործում ու պայքարում ենք, կոմունիզմի հաղթարշավի էրա է։ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի նոր Ծրագիրը հանդիսանում է դեպի կոմունիզմ ընթացող միլիոնավոր մարդկության, ազատության ու անկախության, դեմոկրատիայի ու խաղաղության, սոցիալիզմի ու կոմունիզմի համար մարտնչող միլիոնավոր աշխատավորների, ամբողջ աշխարհի պրոգրեսիվ մարդկության լավագույն իղձերի ու ձգտումների խարտիան։ Պարտիայի նոր Ծրագիրը մարքսլենինյան իմացությամբ ընդհանրացնելով անցած ժամանակաշրջանի հոյակապ արդյունքները, չտեսնված պարզությամբ, խորությամբ ու կոնկրետությամբ տվեց մարդկության կոմունիստական վաղվա նկարագիրը, բացահայտեց մեր երկրում կոմունիզմի կառուցման օրինաչափությունները ու նրա համաշխարհային պատմական նշանակությունը։ Ծրագրում ընդգծված է, որ առաջիկա երկու տասնամյակում պարտիայի ու սովետական ժողովրդի գլխավոր տնտեսական խնդիրն է կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը և տրված է այդ բազայի հետևյալ

---

2 «Правда», 23 հունվարի, 1962։

ամրողջական բնորոշումը. «Դա նշանակում է՝ երկրի լրիվ էլեկտրիֆիկացում և դրա հիման վրա տեխնիկայի, հասարակական արտադրության տեխնոլոգիայի ու կազմակերպման կատարելագործում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում. արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացում, դրանց ավելի ու ավելի լրիվ ավտոմատացում. քիմիայի լայն կիրառում ժողովրդական տնտեսության մեջ. արտադրության նոր, տնտեսապես արդյունավետ ճյուղերի, էներգիայի և նյութերի նոր տեսակների լայն զարգացում. բնական, նյութական և աշխատանքային ռեսուրսների բազմակողմանի և ռացիոնալ օգտագործում. գիտության ու արտադրության օրգանական միացում և գիտա-տեխնիկական առաջադիմության արագ տեմպեր. աշխատավորների կուլտուր-տեխնիկական բարձր մակարդակ. դպրի գերազանցություն առավել զարգացած կապիտալիստական երկրների նկատմամբ, աշխատանքի արտադրողականության գծով, որը կոմունիստական հասարակարգի հաղթանակի կարևորագույն պայմանն է»[3]։

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը, սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանի համեմատությամբ, տեղի է ունենում առանձնահատուկ ։, անկասկած. ավելի նպաստավոր պայմաններում։ II համաշխարհային պատերազմում սովետական հասարակարգի, տնտեսակարգի ու զինված ուժերի հաղթանակը ակնհայտորեն ապացուցեց սոցիալիզմի կենսունակությունն ու հզորությունը կապիտալիզմի համեմատությամբ։ Միջազգային իմպերիալիզմի ֆաշիստական ռեակցիոն օջախների ջախջախումը ավելի խարխլեց բուրժուական աշխարհը և խորացրեց կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը։

Ասիայի ու Եվրոպայի մի շարք երկրներում ժողովրդական դեմոկրատական կարգերի հաղթանակով վերացավ մեր երկրի կապիտալիստական շրջապատումը. առաջացավ սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, որն այժմ ընդգրկում է երկրագնդի ազգարնակչության 35,5 տոկոսը, տարածության՝ 25,9 տոկոսը և արտադրում է համաշխարհային արդյունաբերական արտադրության $^1/_3$-ից ավելին, իսկ հացահատիկի և բամբակի արտադրության՝ կեսից ավելին։ 1965 թ. սոցիալիզմի համաշխարհային սիստեմը կարտադրի համաշխարհային արդյունաբերական արտադրանքի 50 տոկոսից ավելին, որով և կգերազանցի կապիտալիզմի համաշխարհային սիստեմին նյութական արտադրության մեջ։ Դրա գրավականն են հանդիսանում սոցիալիստական էկոնոմիկայի կենսունակությունն ու առավելությունները, որոնք արտահայտվում են աճի բարձր տեմպերով, տնտեսության պլանայնությամբ, աշխատանքի միջազգային բաժանման և տնտեսական հարաբերությունների ու համագործակցության նոր սիստեմով, սոցիալիստական արտադրական հարաբերությունների տիրապետությամբ։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում անասելի աճել է ՍՍՌՄ տնտեսական, քաղաքական, ռազմական ու տեխնիկական հզորությունը։ Այժմ չկա որևէ ուժ, որը կարողանա շեղել մեր երկիրը կոմունիզմի հաղթարշավի ուղուց։ Հասկանալի է, որ սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակի պայմաններում, երբ սոցիալիստական հզոր էկոնոմիկան աշխարհին տալիս է առաջավոր գիտության ու տեխնիկայի զարգացման փայլուն օրինակներ, ստեղծվել են կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցման համար անհրաժեշտ բոլոր օբյեկտիվ ու սուբյեկտիվ ֆակտորները։ Ամենից առաջ մեր երկրում իր բուռն վերելքն ու ծաղկումն է ապրում առաջավոր սոցիալիստական տնտեսակարգը, այնուհետև մենք ունենք հսկայական բնական հարստություններ։ ՍՍՌՄ-ում հետազոտված երկաթահանքի պաշարները համաշխարհային պաշարների 50 տոկոսից ավելին են և 3,3 անգամով գերազանցում են Անգլիայի, Ֆրանսիայի և ԳՖՌ-ի պաշարները՝ միասին վերցրած։ ՍՍՌՄ-ի ածխահանքերի պաշարները համաշխարհային պաշարների 57 տոկոսից ավելի են. քիմիայի և գիտության այլ ճյուղերի շտեմնված զարգացման հետևանքով մենք ստեղծել ու զարգացնում ենք արտադրության համար անհրաժեշտ արհեստական հումքի արտադրություններ (պլաստմասսաները, արհեստական թելերը և այլն), որն իրենով նշանավորում է բնության նկատմամբ մարդու տիրապետության մի նոր, ավելի բարձր աստիճան։ Մենք ունենք բարձրորակ ինտելիգենցիա և այժմ տարեկան երեք անգամ ավելի ինժեներներ ենք պատրաստում ԱՄՆ-ի համեմատությամբ։ Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի հարուստ փորձը, համաժողովրդական սոցիալիստական մրցման նոր ձևերի ծավալումը, կոմունիստական բրիգադների աճն ու զարգացումը և ԵՍԿՊ մարքս-լենինյան գեկավարությունը կոմունիզմի ծավալուն շինարարության մեր հետագա հաջողությունների ամենաորոշիչ գրավականներն են։

---

3 Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագիր, Հայպետհրատ, 1961, էջ 79։

Սոցիալիստական արտադրական հարաբերությունների տիրապետության, անշեղ զարգացման ու կատարելագործման պայմաններում, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը բխում է արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների համապատասխանության տնտեսական օրենքի պահանջներից և հանդիսանում է սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու պրոցեսի հիմքը։ Այդ կոմունիստական վերաճման պրոցեսը տեղի է ունենում առանց անտագոնիստական կոնֆլիկտների, որովհետև նրա գլխավոր շարժիչ ուժը ժողովրդի արմատական տնտեսական շահերն են։ Սոցիալիզմից կոմունիզմին աստիճանաբար անցումը մարքսիզմ-լենինիզմով զինված, առաջավոր գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների և անընդհատ տեղի ունեցող գիտատեխնիկական պրոգրեսի վրա հենվող միլիոնավոր բազմաղդ սովետական ժողովրդի գիտակցված գործունեության պատմական պրոցեսն է, որի հիմքը կազմում է կոմունիզմի արտադրողական ուժերի զարգացումը։ Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը սոսկ տեխնիկա-տնտեսական խնդիր չէ, նա նաև առաջնակարգ սոցիալ-էկոնոմիկական պրոբլեմ է, որովհետև «դրա հետևանքով ՍՍՌՄ-ը կունենա իրենց հզորությամբ չտեսնված արտադրողական ուժեր, կգերազանցի ամենից ավելի զարգացած երկրների տեխնիկական մակարդակը և բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի արտադրությամբ առաջին տեղը կգրավի աշխարհում։ Դա հիմք կծառայի սոցիալիստական հասարակական հարաբերությունները աստիճանաբար կոմունիստական հարաբերությունների վերափոխելու համար. արտադրության այնպիսի զարգացման համար, որը հնարավորություն կտա լիաառատ բավարարելու հասարակության և նրա բոլոր քաղաքացիների պահանջմունքները»[4]։

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը նշանակում է աշխատանքի արտադրողականության զարգացման մինչև այժմ չտեսնված բարձրագույն աստիճան, նշանակում է նյութական ու հոգևոր բարիքների առատություն, սոցիալիստական աշխատանքի վերաճում կոմունիստական աշխատանքի, որը մարդու համար լինելու է առաջին կենսական պահանջ, սոցիալիստական հասարակական հարաբերությունների վերաճում կոմունիստական հասարակական հարաբերությունների, որոշիչ բազա՝ հասարակության բոլոր անդամների համար, աշխատանք՝ ըստ ունակությունների և սպառում՝ ըստ պահանջմունքների սկզբունքը իրականացնելու համար։

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը նշանակում է արտադրողական ուժերի զարգացման որակական նոր աստիճան, իսկ հանրահայտ է Լենինի ցուցումն այն մասին, որ նոր հասարակարգը հնին հաղթահարում է ամենից առաջ հասարակական աշխատանքի նոր, ավելի բարձր աստիճանի ստեղծումով։ Մինչև կոմունիստական հասարակարգի ստեղծումը, մարդկության պատմության ամբողջ նախընթաց ժամանակաշրջանում, արտադրողական ուժերը, չնայած նրանց զարգացման պրոցեսին, բնորոշվել են մի շարք սահմանափակություններով, որոնք հաղթահարվում են կոմունիզմի ծավալուն շինարարության դարաշրջանում և վերջնականապես դադարում են գոյություն ունենալուց կոմունիզմի լիակատար հաղթանակի պայմաններում։ Ամենից առաջ մարդը հսկայական պրոգրես է ապրել անտաշ քարե ու փայտե գործիքների ժամանակաշրջանից մինչև մեր օրերը, սակայն, մարդու ստեղծած աշխատանքի գործիքները առ այսօր էլ նրան չեն ազատել ձեռքի աշխատանքի կատարողական ֆունկցիայի մեծ մասից։ Արտադրության մեջ գործածվող էներգիայի մեխանիկական աղբյուրները, որոնք պահանջում էին աշխատանքի մեծ ծախսումներ, մարդկանց ֆիզիկական ուժին փոխարինեցին միայն մասամբ։ Արտադրությունը հիմնականում օգտագործում էր բնության մեջ գտնվող պատրաստի նյութերը։ Վերոհիշյալ պատճառների հետևանքով առ այսօր էլ աշխատանքի արտադրողական ուժերը զգալիորեն սահմանափակվում են մարդու ֆիզիկական հնարավորությամբ. մարդը հանդես է գալիս արտադրության պրոցեսում ոչ միայն որպես ուղղություն տվող ու կարգավորող, այլև անմիջապես ձեռքի աշխատանք և ոչ լրիվ մեքենայացված օպերացիաներ կատարող։

Անկասկած սոցիալիզմի հաղթանակը մեծ առաջադիմություն բերեց վերոհիշյալ սահմանափակությունների հաղթահարման ուղղությամբ, սակայն սոցիալիզմի ժամանակ էլ գոյություն ունեն գյուղի և քաղաքի, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունները, նոր է միայն սկզբնավորվում արտադրության կոմպլեքսային մեքենայացման և կոմպլեքսային ավտոմատացման պրոցեսը։ Այդ իսկ պատճառով էլ վերոհիշյալ սահմանափակությունները լրիվ կվերանան կոմունիզմի ժամանակ. դրանով իսկ կստեղծվեն արտադրողական ուժերի զարգացման և բնությունը մարդու պահանջներին ենթարկելու ամենալայն հեռանկարներ։ Դա ամենից առաջ նշանակում է արտադրության բարձր մակարդակ. ՍՄԿՊ Ծրագրում նախագծվում է 1960—1980 թթ. ՍՍՌՄ արդյունաբերության արտադրանքը ավելացնել 6 անգամով, որը զգալիորեն

---

[4] Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագիր, էջ 79։

կգերազանցի արդյունաբերության համաշխարհային արտադրանքի այժմյան ծավալին։ Արդյունաբերության ծավալով մեր երկիրը ԱՄՆ-ին հասնելու և գերազանցելու է 1965 թ., իսկ մեզ շնչին հասանելիք փայարաժնով՝ 1970 թ.։ Նույն ժամանակաշրջանում գյուղատնտեսության արտադրանքը աճելու է 3,5 անգամով, ամբողջ ժողովրդական տնտեսության հասարակական արտադրության համախառն արտադրանքը և զուտ եկամուտը՝ մոտ 5 անգամով, կապիտալ ներդրումները կազմելու են 2 տրիլիոն ռուբլի։ 1980 թ. արտադրության միջոցների արտադրությունը ծանր արդյունաբերության համար կաճի 6 անգամով, իսկ արտադրության միջոցների արտադրությունը թեթև արդյունաբերության համար՝ 13 անգամով։ Պահպանվում է ծանր արդյունաբերության առավել զարգացման լենինյան սկզբունքը, որպես կոմունիստական բնույթակիր վերարտադրության հիմնական պայման, սակայն փոփոխվում է ծանր և թեթև արդյունաբերության ամի տոկոսային փոխհարաբերությունը, այն հաշվով, որ ավելի շատ միջոցներ օգտագործվեն ժողովրդի բարեկեցության արմատական բարելավման համար։ Այսպես, օրինակ, եթե 1929—1940 թթ. ծանր արդյունաբերության տարեկան միջին աճը թեթև արդյունաբերության տարեկան միջին աճից ավելի էր 70 տոկոսով, ապա 1961—1980 թթ. այդ դերազանցումը կկազմի 20 տոկոս։

Քանամյակը ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության համար հանդիսանալու է հսկայական թռիչքի ժամանակաշրջան, որի շնորհիվ 1980 թ. մեր երկիրը կարտադրի գրեթե 2 անգամով ավելի շատ արտադրանք, քան այժմ արտադրվում է ամբողջ սոցիալիստական աշխարհում։ Մենք կունենանք ամենահզոր, երիտասարդ և կատարելագործված արտադրական ապարատը, ըստ որում հիմնական արտադրական ֆոնդերը կաճեն 5 անգամով։

Արդյունաբերության համախառն արտադրանքը 20 տարում աճելու է ավելի քան 6 անգամով, ըստ որում արտադրության միջոցների արտադրությունը՝ 7 անգամով, իսկ սպառման առարկաների արտադրությունը՝ 5 անգամով։

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման հիմնական ուղղություններն են՝ արտադրության տեխնոլոգիայի ու կուլտուրայի նոր մակարդակի ստեղծումը, արտադրության կազմակերպման կատարելագործումը, արտադրության կենտրոնացման, մասնագիտացման, կոոպերացման և կոմբինացման պրոցեսների զարգացումը, գիտության դերի բարձրացումը՝ որպես անմիջական արտադրողական ուժի և ժամանակակից գիտական նվաճումների տեխնոլոգիական կիրառումը, կոմպլեքսային մեքենայացման և կոմպլեքսային ավտոմատացման իրականացումը ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում, գերբարձր ճնշման, ջերմաստիճանի ու արագության տեխնիկայի զարգացման ու տնտեսական կիրառման ծավալումը և, վերջապես, ամբողջ երկրի էլեկտրիֆիկացումը, որը հիմնականում կավարտվի երկրորդ տասնամյակում. Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման առաջատար օղակը հանդիսանում է ծանր արդյունաբերությունը, որը հասարակության տեխնիկական առաջընթացի հիմքն է։

Մեր ժամանակաշրջանում փաստորեն տեղի է ունենում տեխնիկական ռևոլյուցիա՝ ինչպես սոցիալիզմի, այնպես էլ կապիտալիզմի համաշխարհային սիստեմի երկրներում։ Սակայն տարբեր են նրանց աղբյուրները, նպատակները ու հետևանքները։ Բուրժուական դաղափարախոսները ու ռեֆորմիզմի մունետիկները այն բնորոշեցին որպես կապիտալիզմի տնտեսական զարգացման նոր աստիճան, որպես «III արդյունաբերական հեղաշրջում», որն իբր թե իր հետ բերում է նաև «սոցիալական ռևոլյուցիա» այն իմաստով, որ համահարթելով հակասությունները կապիտալիստական իրադրության պայմաններում, ապահովելու է ժողովրդական մասսաների «բարձր կենսամակարդակը»։ Իրականում գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումները՝ ատոմային էներգիան, կոմպլեքսային մեքենայացումն ու կոմպլեքսային ավտոմատացումը, հրթիռային տեխնիկան և այլն, հակադրվում են բուրժուական, իրենց դարն ապրած, հին արտադրական հարաբերություններին և հանդիսանում են նոր, աճող ու զարգացող կոմունիստական հասարակարգի նյութատեխնիկական բազայի հիմքը։ Եթե կապիտալիզմի պայմաններում տեխնիկական հեղաշրջումները տեղի են ունենում սեփական ժողովրդի ու դաղութների անասելի շահագործումից ստացված միջոցներով, նպաստում են շահագործման ուժեղացմանը, ծառայում որպես իմպերիալիստական պատերազմներ հրահրելու դենք, ապա սոցիալիստական հասարակարգում ժամանակակից գիտատեխնիկական հեղաշրջումը հանդիսանում է կոմունիստական արդյունաբերական մեծագույն ռևոլյուցիա, որի նպատակն է կոմունիզմի նյութատեխնիկական բազայի հիման վրա ՍՍՌՄ-ում ամենարարձր կենսամակարդակի ստեղծումը։

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման կարևորագույն օղակը երկրի համատարած էլեկտրիֆիկացումն է, էլեկտրաէներգիայի յայն ու աճող մասշտաբներով օգտագործումը արտադրության ու կենցաղի բոլոր բնագավառներում։ Էներգիայի նոր տեսակները ծառայելու

են նաև էլեկտրիֆիկացման մակարդակի բարձրացմանը, որովհետև վերջինս հանդիսանում է տեխնիկական պրոգրեսի ապահովման վճռական պայմանը։ Հնարավորություն ընձեռելով լայն մասշտաբներով մեքենայացնել և ավտոմատացնել արտադրությունը, էլեկտրիֆիկացիան կապահովի աշխատանքի արտադրողականության բուռն վերելքը։ Եթե 1960 թ. ՍՍՌՄ-ում արտադրվել է 292 միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա, ապա 1970 թ. կարտադրվի 900—1000 միլիարդ, իսկ 1980 թվականին՝ 2700—3000 միլիարդ կիլովատ-ժամ։ Աշխատանքի էլեկտրացինվածությունը առաջիկա տասնամյակում կաճի մոտ 3 անգամ։ Էլեկտրաէներգիայի արտադրության այդ հսկայական աճը տեղի է ունենալու նոր հզոր հիդրոէլեկտրակայանների, ջերմաէլեկտրակայանների և ատոմային էլեկտրակայանների կառուցման շնորհիվ։

Քսան տարվա ընթացքում կառուցվելու են 180 հզոր էլեկտրակայաններ։ Արևելյան Սիբիրում կավարտվի Բրատսկի ու Կրասնոյարսկի հիդրոէլեկտրակայանների կառուցումը, Անգարա ու Ենիսեյ գետերի վրա կկառուցվեն 4 միլիոն կիլովատից ավելի կարողության մի քանի էլեկտրակայաններ, կստեղծվեն Կրասնոյարսկի շրջանի Իտատսք Բոգոտոլսկի ու Տնայշետի շրջանի Բրշա-Բորոդինսկի ջերմային էլեկտրակայանների խմբերը, յուրաքանչյուրը 3 միլիոն կիլովատից ավելի հզորությամբ։ Կավարտվի Վոլգա—Կամա հիդրոէլեկտրակայանների կասկադի շինարարությունը։ Խոշոր հիդրոէլեկտրակայաններ կկառուցվեն Միջին Ասիայում, կկառուցվի ստորին Օբի 6 միլիոն կիլովատ կարողությամբ հիդրոէլեկտրակայանը։ Բազմաթիվ հզոր ջերմային էլեկտրակայաններ հանդես կգան մեր լայնածավալ երկրի տարբեր տեղերում։ Կստեղծվի ՍՍՌՄ միասնական էլեկտրասիստեմը՝ բարձր լարվածության հզոր մագիստրալներով և բաշխիչ լայն ցանցով։ Էլեկտրաէներգիայի արդյունաբերական արտադրանքը զգալիորեն գերազանցելու է էլեկտրաէներգիայի արդյունաբերական սպառման աճից, որի հետևանքով ավելի արագ տեղի կունենա էլեկտրաէներգիայի սպառման աճը գյուղատնտեսության, տրանսպորտի, կոմունալ տնտեսության և կենցաղի բնագավառներում։ 1960—1980 թթ. ընթացքում էլեկտրականությունը գյուղատնտեսության մեջ կդառնա էներգիայի հիմնական տեսակը. հիմնականում ավարտվող կոմպլեքսային մեքենայացման ու լայն ծավալված ավտոմատացման հիման վրա, գյուղատնտեսական տեխնիկապես բարձր հագեցված աշխատանքը կդառնա արդյունաբերական աշխատանքի մի տարատեսակը։

Այսպիսով, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցումը և արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացումն ու ավտոմատացումը մարդուն լրիվ կազատեն ֆիզիկական ծանր աշխատանք կատարողի ու շարժիչ ուժի ֆունկցիայից։

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման քսանամյակում տեղի է ունենալու հասարակական կուտակման ֆոնդի բացարձակ արագ աճ՝ սպառման ֆոնդի համեմատությամբ, որն անհրաժեշտ է ինչպես հիմնական արտադրական ֆոնդերի, այնպես էլ հիմնական ոչ արտադրական ֆոնդերի բուռն վերելքի համար։ Որպես էներգիայի ու հումքի աղբյուրներ լայնորեն օգտագործվելու են ածուխը, նավթը, գազը, կստեղծվի ջերմամիջուկային կառավարվող սինթեզը, գործի կդրվեն 50—60 տոկոս օգտակար գործողության գործակից ունեցող շարժիչներ։ Հասարակությունն իր տրամադրության տակ կունենա անսպառ էներգիայի աղբյուրներ, կլուծվի վառելիքի պրոբլեմը, հրապարակից դուրս կգան էլեկտրատուրբինները, շոգեկաթսաները, ջերմային շարժիչները և իրենց դարն ապրած այլ աշխատամիջոցներ։ Այսպիսով, եթե մինչ կապիտալիզմը աշխատամիջոցները բնորոշվում էին ձեռքի ու արհեստավորական տեխնիկայով, իսկ կապիտալիզմի համար բնորոշ է մեքենայական տեխնիկան, ապա կոմունիզմի աշխատանքի միջոցները կհանդիսանա մեքենայական տեխնիկայի բարձր աստիճանը, որը բնորոշվում է ավտոմատ գծերով, ցեխերով ու ձեռնարկություններով, ներբարձր ու ցածր ջերմության, բարձր ճնշման ու արագության հիման վրա առավել լարվածությամբ գործող ագրեգատներով, գազատուրբիններով, ավիահրթիռային նորագույն շարժիչներով, քիմիական էներգիայով, արևի էներգիայի, ստորերկրյա ջերմության, ծովերի մակընթացության և քամու էներգիայի օգտագործմամբ։ Կոմպլեքսային մեքենայացումն ու ավտոմատացումը անհնար է առանց կիբեռնետիկայի, հաշվիչ ու կառավարող էլեկտրական մեքենաների և ավտոմատ մեքենաների սիստեմների զարգացման։ Կոմունիզմի աշխատանքի միջոցների համար բնորոշ է ռադիոէլեկտրոնիկայի, կիսահաղորդիչների և ուլտրաձայնի օգտագործումը։

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համար շատ կարևոր է արտադրական պրոցեսների քիմիացումը, ժողովրդական տնտեսության մեջ ու կենցաղում քիմիայի լայն կիրառումը։ Գիտությունը հասել է զարգացման այն աստիճանին, երբ քիմիական միջոցներով ստեղծվում են նոր ամուր և առանձնահատուկ նյութեր, բնական հումքի պաշարները լրացվում ու փոխարինվում են արհեստականորեն ստեղծված հումքով։ Մեր ժամանակաշրջանը բնորոշվում է

պոլիմերների՝ սինթետիկ ձյութերի, պլաստմասսաների, արհեստական թելերի և այլ նյութերի արտադրությամբ ու օգտագործմամբ. անկասկած այդ նյութերի արտադրությունն ու օգտագործումը կյանքի է կոչում նոր տեխնիկա, ներդործում է աշխատանքի միջոցների փոփոխման վրա՝ նրանց զարգացման ու կատարելագործման ուղղությամբ և լայնացնում է բնության վրա մարդու ունեցած ազդեցության ոլորտը։ Քիմիական արդյունաբերության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող գազի հանույթը 20 տարում ավելանալու է 14—15 անգամ, իսկ քիմիական ինդուստրիայի արտադրանքը կաճի մոտավորապես 17 անգամ։ Բացառիկ է պոլիմերների քիմիայի զարգացման դերը։ Սինթետիկ նյութերի ու պլաստմասսաների արտադրությունը կաճի 60 անգամ, արհեստական ու սինթետիկ թելերը՝ մոտավորապես 15 անգամ, իսկ հանքային պարարտանյութերինը՝ 9—10 անգամ։ Այժմ հսկայական նշանակություն ունի ոչ միայն էներգիայի նոր տեսակների հայտնաբերումը, այլև նրանց լծան ու մատչելի ձևով էլեկտրաէներգիայի փոխարկումը և էներգոսարքավորումների օգտակարության գործակցի խիստ բարձրացումը։

Ազատվելով բանող մեքենաների ու գործիքների անմիջական գործադրողի ֆունկցիայից, մարդը արտադրության մեջ կգործի որպես հսկող ու կարգավորող ուժ, և գիտական ստեղծագործական գործունեությունը կհանդիսանա մարդու արտադրողական ուժի բացահայտման ու իրականացման գլխավոր ձևը։ Ավտոմատիկ կարգավորվող մեքենաների սիստեմի պայմաններում մարդը կատարում է միայն մեքենաների աշխատունակության պահպանողի և հսկողի, արտադրության բոլոր էլեմենտները կատարելագործողի և նոր մեքենաներ ստեղծողի ֆունկցիա։

Անընդհատ տեղի ունեցող տեխնիկական պրոգրեսի հիման վրա սիստեմատիկորեն կատարելագործվում են աշխատանքի միջոցները, արագանում է արտադրության պրոցեսը, բարձրանում է աշխատամիջոցների օգտակարության գործակիցը և մեքենաների դիմացկունությունն ու գործողության արագությունը։ Դնալով արագանալու են արտադրության աճի տեմպերը՝ մասամբ ի հաշիվ նոր կառուցված ձեռնարկությունների ու հին գործարանների լայնացման, բայց հիմնականում՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին։ Արտադրության արտադրանքի աճի 80 տոկոսից ավելին ստացվելու է աշխատանքի արտադրողականության բարձրացման հետևանքով։ Աշխատանքի արտադրողականությունը 1960—1980 թթ. ընթացքում արդյունաբերության մեջ աճելու է 4—4,5 անգամ, իսկ գյուղատնտեսության մեջ՝ 5—6 անգամ։ Այդ աճը կատարվելու է աշխատանքի միջոցների կատարելագործման, աշխատանքի որակի բարձրացման, աշխատանքի կազմակերպման կատարելագործման, աշխատողների կոմունիստական գիտակցության բարձրացման, աշխատանքի արդյունքի մեջ աշխատողների նյութական շահագրգռվածության զարգացման ու կատարելագործման հիման վրա։

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը ինքնանպատակ չէ. նա հանդիսանալու է նյութական և հոգևոր բարիքների առատության ստեղծման բազա։ Արտադրության աճը բոլոր բնագավառներում և հատկապես գյուղատնտեսության մեջ պետք է դերազանցի հասարակական և անձնական սպառման հարաճուն պահանջները, որի հիման վրա սովետական ժողովուրդը կունենա աշխարհում ամենաբարձր կենսամակարդակը։ Կստեղծվեն բոլոր նյութական նախադրյալները սոցիալիստական սեփականության երկու ձևերի վերաճման համար կոմունիստական միասնական սեփականության, դնալով կարազանա կոմունիստական միասնական սեփականության հաստատման պրոցեսը։ Մեկ մոտ կլինի ամենակարճ աշխատանքային օրը, ամենաբարձր արտադրողական աշխատանքը և ըստ աշխատանքի քանակի ու որակի ամենաբարձր հատուցումը, մինչև որ վերջնականապես իրականանա արտադրության և սպառման կոմունիստական ոկզբունքը։ Ատիճանաբար կհաղթահարվեն սոցիալիզմին հատուկ տնտեսական, հասարակական ու քաղաքական սահմանափակությունները։ Առաջիկա տասնամյակում կիրականանա 6-ժամյա աշխատանքային օրը և երկօրյա հանգստով աշխատանքային շաբաթը, իսկ երկրորդ տասնամյակում տեղի կունենա աշխատանքային օրվա հետագա կրճատման պրոցեսը։ Հիշտ է, աճելու է նաև արտադրության ոլորտի աշխատողների քանակը, բայց ավելի արագ է աճելու ոչ արտադրական ոլորտի—կուլտուրայի, գիտության, հասարակության սպասարկման բնագավառների աշխատողների քանակը, որը հասարակական սպառման ֆոնդերի դերի հարաճուն զարգացման ու ժողովրդի կենսամակարդակի վերելքի ցուցանիշ է։

Սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը միաժամանակ նշանակում է մարդու որպես հասարակության հիմնական արտադրողական ուժի, բազմակողմանի ֆիզիկական ու հոգևոր զարգացում ուսուցումը կյանքին, արտադրությանը մոտեցնելու և պոլիտեխնիկական կրթության լայն արմատավորման միջոցով։ Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի հիման վրա տեղի կունենա աշխատանքի բնույթի փոփոխումը. եթե սոցիալիզմը կապիտալիզմին հա-

տուկ ծանր բեռ հանդիսացող աշխատանքը վերացրեց և սկիզբ դրեց սոցիալիստական ազատ աշխատանքին, որը գոյության միջոց լինելով հանդերձ դարձել է փառքի, պատվի ու հերոսության գործ, ապա կոմունիզմի նյութատեխնիկական բազան այն անսասան հիմքն է, որի տիրապետության պայմաններում կվերանա տարբերությունը որակյալ ու անորակ աշխատանքի միջև, կանհետանան էական տարբերությունները մտավոր ու ֆիզիկական աշխատանքի, գյուղի ու քաղաքի միջև և աշխատանքը հօգուտ հասարակության կդառնա առաջին կենսապահանջ։ Այսպիսով, կստեղծվեն բոլոր օբյեկտիվ ու սուբյեկտիվ պայմանները՝ աշխատանքը ոստ ունակության և սպառում ըստ պահանջմունքների կոմունիստական սկզբունքի իրականացման համար։

Սոցիալիզմը բաց արեց լայն հնարավորություններ մասսաների ստեղծագործական գործունեության համար, իսկ կոմունիզմի ժամանակ ստեղծագործությունը կդառնա բոլոր աշխատանքների չափանիշն ու օրենքը։

Այսպիսով, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը այն ելակետն է, որի հիման վրա տեղի է ունենալու անցումը սոցիալիզմի հավասարությունից (որն իր մեջ պահպանում է բուրժուական իրավական անհավասարության մնացուկը, ունեցվածքների ու կենսամակարդակների՝ որպես սոցիալական երևույթների տարբերությունը, ինչպես նաև անհատի ու հասարակության շահերի հակադրության մնացուկները անցյալից ժառանգած հետամնաց երևույթների ձևով) դեպի կոմունիստական հավասարությունը։ Այդ նշանակում է ոչ այլ ինչ, եթե ոչ անցում դեպի անդասակարգ հասարակություն և դասակարգային ու սոցիալական շերտերի լրիվ անհետացում։

Իրականացնելով մեծ Լենինի՝ «Կոմունիզմը Սովետական իշխանությունն է, պլյուս ամբողջ Երկրի էլեկտրիֆիկացիան» հանճարեղ դրույթը, սովետական ժողովուրդը իր մեծագործ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ 1960—1970 թթ. կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ընթացքում մեր երկրի բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքով կդերազանցի ԱՄՆ-ին և բոլորի համար կապահովի նյութական լիություն։ 1971—1980 թթ. կավարտվի կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը և ՍՍՌՄ-ում հիմնականում կկառուցվի կոմունիստական հասարակարգը, որի լիակատար կառուցումը կավարտվի հաջորդ ժամանակաշրջանում։

## СОЗДАНИЕ И РАЗВИТИЕ МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОЙ БАЗЫ КОММУНИЗМА В СССР

В. М. АГУЗУМІЦЯН

(Резюме)

Каждая новая общественно-экономическая формация на основе развития производительных сил и производственных отношений создает свою материально-техническую базу — совокупность всех средств труда, нужных для производства материальных благ. Материально-техническая база коммунистического общественного строя соответственно с двумя его фазами (социализмом и коммунизмом) имеет два основных этапа развития. Советский Союз, унаследовавший от царской России отсталую аграрно-индустриальную экономику со слабо развитой материально-технической базой, за короткий исторический срок добился огромных успехов, осуществив индустриализацию и техническую реконструкцию всего народного хозяйства и построив социализм. Основные фонды СССР в 1960 г. по сравнению с 1928 г. выросли более чем в 6 раз, причем основные производственные фонды — в 8 раз, а основные непроизводственные фонды — более чем в 4,5 раза.

XXII съезд КПСС вошел в историю как съезд строителей коммунизма. В новой программе КПСС, принятой съездом, подчеркнуто, что главной экономической задачей нашей страны на данном этапе является создание и завершение развития за двадцать лет материально-технической базы коммунизма. Это означает полную и сплошную электрификацию страны, усовершенствование техники и технологии производства, комплексную механизацию и комплексную автоматизацию производственных процес-

сов, широкое применение химии в народном хозяйстве, использование новых видов энергии и сырья, разностороннее и рациональное распределение ресурсов, укрепление и развитие органических связей производства с наукой, убыстрение технического прогресса и обеспечение превосходства СССР над наиболее развитыми капиталистическими странами как по уровню повышения производительности труда, так и по уровню благосостояния народа. За двадцать лет капитальные вложения в народное хозяйство составят 2 триллиона рублей. Производство средств производства для отраслей I подразделения возрастет в 6 раз, а для отраслей II подразделения — в 13 раз. Продукция промышленности увеличится в 6 раз, а продукция сельского хозяйства — в 3,5 раза.

Создание материально-технической базы коммунизма не является самоцелью; оно представляет основу для усовершенствования социалистических производственных отношений по пути их перерастания в коммунистические производственные отношения и для всеобъемлющего обеспечения изобилия материальных и духовных благ.